Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1168-17.05.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի 15.1-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«3) 2011 հուլիսի 1-ից նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 58.35 միլիոն դրամից ավելի ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն ունեցող (ավելացված արժեքի հարկի շեմը գերազանցած) կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Մինչեւ 2012 թվականի հունվարի 1-ը ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը եւ տեղեկությունները հարկային մարմիններին կարող են ներկայացվել մինչեւ 2012 թվականի հունվարի 1-ը գործող կարգով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների եւ առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծում «2011 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «2012 թվականի հունվարի 1-ը» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետվությունների ներկայացման էլկտրոնային համակարգին անցումը բնութագրվում է որոշակի ժամանակատարությամբ:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: